

ՆՈԳԵԻՈՐ ՈՒՈՐՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԲԱՌԵՐԸ ՆՈՎՆԱՆՆԵՍ ՇԻՐԱԳԻ «ՆԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆՈՒՄ»

Նովի. Շիրագի «Նայոց դանթեական»¹ պոեմը բավականին ծավալուն սրեղծագործություն է (350 էջ), որի առանցքը հայոց մեծ եղեռնն է: 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի կրած անլուր փառապանքների գեղարվեստական նկարագրության առումով Շիրագի այս սրեղծագործությունը լավագույններից է: Այն մի անմահ հիշատակարան է գերմարդկային փաժանակության մասին եւ ահեղ ահագանգ մարդկությանը՝ նման վայրագությունները կանխելու համար: Պոեմը հզոր փաղանդի արտահայտություն է ոչ միայն գեղարվեստական մրաժողության առումով, այլեւ հայերենի հարուստ բառազանձի հմուտ կիրառությամբ, պարկերավորման միջոցներով, լեզվաոճական առանձնահատկություններով: Այն աչքի է ընկնում հարուստ բառապաշարով, գեղարվեստական պարկերների ընդգծված եւ ցայտուն արտահայտությամբ, մակդիրների, համեմատությունների եւ փոխաբերությունների առաքությամբ, որոնք արտացոլվում են հայոց լեզվի բառակազմական լայն հնարավորություններով եւ բառերի իմաստային բազմազանությամբ:

Շիրագի այս պոեմում գործածվում են այնպիսի նորակազմ բառեր եւ բառային այլ կարգի միավորներ՝ բառակապակցություններ, հարադրություններ եւ այլն, որոնք հիմնականում կազմվում են հայոց լեզվի գործածական բառապաշարի հիման վրա՝ բարդումով, ածանցմամբ եւ հարադրումով: Դրանց զուգընթաց կերպվում են բազմաթիվ նոր բառեր, որոնք աչքի են ընկնում իմաստային աներեւակայելի լայնությամբ եւ խորությամբ: Մեծ բանաստեղծը Դանթեին փանում է հայոց կոտորածների վայրերով, որոնք նկարագրելու ընթացքում գործածում է նաեւ հնաբանություններ, գրաբարյան եւ գրքային բառեր, փեղին եւ պարճառաբանված բարբառաբանություններ, հեղինակային նորաբանություններ եւ մի շարք դիպվածային բառեր:

Գեղարվեստական մրաժողության բացառիկ ինքնատիպությամբ բնութագրվող հարուստ բառապաշարում անհամեմատ մեծ թիվ են կազմում բառային նորակազմություններն ու նորաբանությունները:

«Լայն առումով նորաբանություն է կոչվում լեզվական ամեն մի նոր իրակություն կամ իրողություն: Նեղ առումով, բառագիտական տեսակետից, նորաբանություն է ամեն մի նոր բառ, կայուն բառակապակցություն, դարձված, առանձնահատուկ արտահայտություն (իդիոմ), բառի նոր իմաստ, բառագործածության նոր իրողություն», - կարդում ենք «Նայոց լեզվի» սկադեմիական հրապարակության մեջ²:

Շիրագի «Դանթեականի» բառապաշարն առ այսօր առանձին քննության չի ենթարկ-

1 Նովիհաննես Շիրագ, Նայոց դանթեականը. հայ կոտորածների հավերժասուգին, Երևան, 1991:

2 Գ. Զահուկյան, Է. Աղայան, Դ. Առաքելյան, Վ. Քոսյան, Նայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 331:

վել, թեև գրվել են նրա մյուս պոեմներին, առհասարակ չափաձոյին նվիրված մի շարք գիտական ուսումնասիրություններ, հոդվածներ, պաշտպանվել են արենախոսություններ³:

Մեր ուսումնասիրության նյութը Շիրազի բառապաշարի բառային նորակազմություններն են, մասնավորաբար հոգետոր ոլորտին առնչվող նորակերպ բառերը: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ անհամեմատ մեծ թիվ են կազմում հոգետոր ոլորտին վերաբերող, հարկապես կրոնական հիմք ունեցող բառերը: Նոգետոր ոլորտի բառային միավոր հասկացության փակ նկարի ենք ունեցել հարկապես ընդհանուր կրոնական, ինչպես նաև Նայասփանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանաբանությանը, եկեղեցական արարողակարգին ու սրբասացությանը, ինչպես նաև ծեսին վերաբերող բառերը:

Մոտավոր հաշվումներով նման բովանդակություն ունեցող բառերի քանակը 80-ն է: Դրանք արձանագրված չեն ժամանակակից գրական արելեահայերենի բառային կազմն ընդգրկող հիմնական բառարաններում, ինչպիսին են Սպ. Մալխասյանցի, Էդ. Աղայանի, ՆՏ ԳԱԱ Նր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հեղինակային խմբի կողմից կազմված բացարձակական բառարանները⁴: Մեր մոտավոր հաշվումներով հոգետոր ոլորտին առնչվող բառերը կազմում են մի քանի հարյուրից անցնող նորակազմությունների մի մասը միայն:

Քննության առնված բառերը կարելի է ենթարկել իմաստաբանական եւ բառակազմական վերլուծության: Նախընտրել ենք իմաստաբանական քննությանը զուգընթաց անդրադառնալ նաև բառային կաղապարներին եւ բառակազմական առանձնահատկություններին: Բառերի թռուցիկ դիտարկումից իսկ ակնհայտ է, որ դրանք, որպես բառային նորակազմություններ, հիմնականում բարդ բառեր են. կան նաև ածանցավոր եւ բարդաձանցավոր կազմություններ:

Նաշվի առնելով բառիմաստային եւ բառակազմական առանձնահատկությունները՝ ի մի բերված նյութը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ ա) *ընդհանրապես մարդկային հավատալիքների հետ կապվող բառեր*, բ) *աստվածաշնչական կամ քրիստոնեական իմաստային հիմքով կերտված բառեր* եւ գ) *այլադասականություն նշող իմաստային հիմքով կազմված բառեր*:

ա) *Ընդհանրապես մարդկային հավատալիքների հետ կապվող բառեր*: Այս ենթախմբում ներառում ենք այն բառերը, որոնք համամարդկային ըմբռնում ունեն եւ չեն սահմանափակվում որեւէ կոնկրետ վայրով, ժամանակով, ժողովրդով կամ ինչ-որ կրոնի բնորոշ հավատալիքով: Այդպիսի բառերում առկա է *դժոխք* բաղադրիչը: Այս բառի մասին «Քրիստոնյա հանրագիտարանում» կարդում ենք. «Աստված ներկայությունից թափուր վայր կամ վիճակ. հավիտենական փանջարան, անլույս պարժարան, անհանգստի կրակ, որը աստվածային արդարության սահմանումով նախատեսված է սատանայի, իր արբանյակների»:

3 Տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Նովի. Շիրազի «Բիրլիական» պոեմի լեզուն և ոճը, «Մովսեսական գրականություն», 1957: Վ. Խ. Ալեքսանյան, Նովիաննես Շիրազի սրբազանությունների լեզուն և ոճը (թեկնածուական արևնախոսություն, ձեռագիր), Երևան, 1965, 334 էջ: Մ. Ա. Մինասյան, Նովիաննես Շիրազի պոեմների լեզուն և ոճը (թեկնածուական արևնախոսություն, ձեռագիր), Երևան, 1987, 152 էջ: Մ. Մելքոնյան, Նովիաննես Շիրազ (գեղարվեստական վարպետության հարցեր), Երևան, 1993:

4 Տե՛ս Սպ. Մալխասյանց, Նայերև բացարձակական բառարան, հհ. 1-4, Երևան, 1944-1945: «Ժամանակակից հայոց լեզվի բացարձակական բառարան», հհ. 1-4, Երևան, 1969-1980: Էդ. Աղայան, Արդի հայերենի բացարձակական բառարան, Երևան, 1976:

րի՝ անկյալ հրեշտակների, դեների եւ սրանց կամակարար մարդկանց համար»⁵: Այս բառի մասին Վ. Առաքելյանի «Ակնարկներ հայոց գրական լեզվի պարմության» գրքում կարդում ենք. «Դրախար եւ դոռիս բառերից առաջինը նշանակել է «այգի», իսկ երկրորդը՝ «ժամար, դժնի», հեղափոխում քրիստոնեական կրոնի ընդունման հետ այդ բառերը բոլորովին փոխեցին իրենց նշանակությունը եւ սրացան զուր կրոնական իմաստ»⁶:

Շիրազի «Դանթեականի» թեմայով պայմանավորված, սպասելի էր, որ *դոռիս* բառով կազմությունները պետք է գերազանցեին կրոնական հավաքալիք նշող բառային հիմք ունեցող մյուս բաղադրություններին: Օրինակները ցույց են տալիս, որ ըստ բառաբարդման կամ ածանցման հարկանիշների՝ քանակապես գերակշռում են այն բաղադրությունները, որոնց կազմում որպես սերող եւ բաղադրող հիմք է հանդես գալիս *դոռիս* արմատը: Ինչպես հայերն է, Էդ. Ադայանը *սերող* է կոչում այն հիմքը, որին ավելանում է մեկ այլ բաղադրիչ, այսինքն՝ բաղադրող հիմքը՝ կազմելով նոր բառ⁷: Նման բաղադրություններն են. *դոռիսախոց*՝ «դոռիսում կամ դոռիսից խոցված, բազմաբանջ, փանջալլուկ», *դոռիսախաւար*՝ «դոռիսի պես խավար», *դոռիսաթուրվել*՝ «դոռիսի թրով կտրվել»⁸, *դոռիսաքեն*՝ «դոռիսի նման, դոռիսին բնորոշ քինոս լինել», *դոռիսավայրագ*՝ «դոռիսի նման դաժան», *դոռիսաթափոր*՝ «դոռիսում կուրակված, խմբված», *դոռիսախոհիվ*՝ «դոռիսին բնորոշ խառնաշփոթ», *դոռիսալաթ*՝ «դոռիսին պարշաճ լաթ, բուրջ», *դոռիսաշրթունք*՝ «դոռիսի նման դաժան շուրթեր ունեցող, մահազույժ», *դոռիսաթախիծ*՝ «ծանրաժանր թախիծ ունեցող, փրփրմերես», *դոռիսաշուն*՝ «ահավոր դաժան, խաժան շուն», *դոռիսունի*՝ «դոռիսային», *դոռիսափարվել*՝ «դոռիս քշվել», *դոռիսահառաչ*՝ «լալահառաչ», *դոռիսախենցար*՝ «դոռիսին համապատասխան դաշույնով», *դոռիսաձոր*՝ «դոռիսի վերածված ձոր, մահվան հովիտ», *դոռիսաշարք*՝ «դոռիսների շարան», *դոռիսասատար*՝ «դաժանաբար սաստկված, նախապրված», *դոռիսաժամ*՝ «փառապալից ժամ», *դոռիսալույս*՝ «դոռիսին բնորոշ լույս, այսինքն՝ խավար» եւ այլն:

Այս բառաշարքում առանձնակի ուշադրության է արժանի *դոռիսաքարուն* բառը: Հայերենի բառարաններում *քարուն* բառ արձանագրված չէ: Կարծում ենք՝ այն կազմված է *քար* արմատից եւ *-ուն* վերջածանցից (կարուն, ծամուն, լցուն), որն ունի քարերով ծածկված, քարերով բանարված իմաստը: *Քարուն* բառին ավելացնելով *դոռիս* արմատը՝ հեղինակն առավելապես է սաստկացրել բառիմաստը (Եվ այս մոդոբի դոռիսաքարուն հետքերը բռնած, Նոր ճամփա ընկանք՝ հին ճամփից հառնած...)⁹:

Ըստ խոսքիմասային պարկանելության՝ նշված բառերը գոյականներ կամ ածականներ են: Բառաշարքում առկա է ընդամենը երկու բայ՝ *դոռիսափարվել* եւ *դոռիսաթուրվել*: Առաջինը հեղինակի խոսքում հարկանշվում է իր խորը իմաստով. «Դեռ չէինք տեսել այսքան մի հսկա մարդաքարավան, Այսքան բազմամբոհ եւ այսքան ծեծվող մի ծով բազմություն, Դոռիսափարվող ճիշտ հարյուր հազար անգեն բազմություն» (էջ 292): Երկրորդ բայը, կազմված լինելով *դոռիս* եւ *թուր* բառերից, աչքի է ընկնում բա-

5 «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Երևան, 2002, էջ 273:

6 Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պարմության, Երևան, 1981, էջ 16:

7 Անդ.:

8 Տե՛ս Փ. ՄԵՆՔԻՍԻԱՆՅԱՆ, Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, 1996, էջ 45:

9 Ն. Շիրազ, Հայոց դանթեականը, էջ 51

ոհմասարի ահագնությամբ եւ մարդկային բուռն հույզերի խարությամբ «... Նոր լենկթեմուր-վեց՝ «Չպիտի շնչե այս ազգն այսուհեպ»։ Դժոխսաթուրվեց՝ «Երբեք (մեզ ահ է հան-նարը հայի) Բոլոր գլուխներն հայոց հիդրայի» (Էջ 84)։

Դժոխք բառը որպես սերող հիմք ունեցող կազմությունները սակավաթիվ են՝ դժոխք-վել՝ «դժոխքի վերածվել», դժոխքանալ՝ «դժոխքի վերածվել»։ Մի քանի բարդություններում դժոխք բառը բարդության վերջին բաղադրիչն է, եւ որպես սերող հիմքեր են հանդես գալիս եղեռն, հազար, մոխիր, յոթն, ոճիր բառերը. ինչպես, օրինակ՝ եղեռնադժոխք՝ «մահե-րով լցված դժոխք» (Երբ սուր անեծքով իմ հայոց խորին Եղեռնադժոխք անդունդին հասանք)¹⁰, հազարադժոխք (... Եվ անցնում էինք հազարադժոխք հայ վշտին հլու)¹¹, մոխրադժոխք՝ «մոխրով լցված դժոխք» (Ու տեսանք դեռ տաք մոխրադժոխքից Այր-ված, կիսայրված գրքեր դուրս քերեց)¹², յոթնադժոխք (Երբ յոթնադժոխք Դեր Ջոր-ներն հասնենք)¹³, ոճրադժոխք (Այս ոճրադժոխքն՝ անեծքով անմեռ)¹⁴ եւ այլն։

Նունական դիցարանի Պատնաս աստծու անունից են կերպված պատնասալեռ, պատնասախեղդ բարդությունները։ Նշված բառերի սերող հիմքը՝ Պատնաս հարուկ անունը, բառիմաստային սաստկականություն է հաղորդում նշված նորակերպումներին։ Այս շարքում կարելի է դասել նաեւ աշխարհապաշտիկ՝ «աշխարհը պաշտող, կենսասեր» եւ աշխարհանգովք՝ «աշխարհը չսիրող, մարդապագ» բաղադրությունները։ Նշված կազ-մություններում աշխարհ սերող հիմքը խորացնում է պաշտել եւ նգովել բայերից կազմված պաշտիկ եւ նգովք հասկացությունների բովանդակությունը։

Նեղիմակային նորաբանությունների այս շարքը ըստ բառակազմական առանձնահատ-կությունների կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ ա) պարզ ածանցավոր բառեր եւ բ) բարդություններ եւ բարդածանցավորներ։ Դիտարկումները ցույց են տալիս, որ երկրորդ խմբի բառերը բնորոշվում են քանակական գերակշռությամբ, իսկ առաջին խմբում ունենք ընդամենը մի երկու բառ՝ դժոխարար (դժոխ+արար) եւ դժոխունի (դժոխ+ունի) պարզածանցավոր նորաբանությունները։

Երկրորդ խմբի բառերից են՝ դժոխաքեն (դժոխ+ա+քեն), դժոխավայրագ (դժոխ+ա+վայրագ), դժոխաթափոր (դժոխ+ա+թափոր), դժոխախոփ (դժոխ+ա+խոփ), դժոխալար (դժոխ+ա+լար), դժոխաշրթունք (դժոխ+ա+շրթ+ունք), դժոխաթափիծ (դժոխ+ա+թափիծ), դժոխաշուն (դժոխ+ա+շուն), դժոխախոց (դժոխ+ա+խոց), դժո-խաքարոն (դժոխ+ա+քարոն), դժոխախավար (դժոխ+ա+խավար), եղեռնադժոխք (եղեռն+ա+դժոխ+ք) եւ այլն։

բ) Աստվածաշնչական կամ քրիստոնեական իմաստային հիմքից սերված բառեր։ «Աստվածաշունչը մեզ ժառանգել է դասական բառերի հսկայական շարքեր, որոն-ցից շատերը պիտի կորչեին առհավեր, եթե այնպեղ չամրագրվեին հավիտենականության հեռանկարով։ Եվ որովհետեւ Աստվածաշունչը հայ ժողովրդի ամենից շատ կարդացվող, անգիր արվող, դպրոցական գործին ծառայող մատյանն էր, այդ պատճառով նրա բառերը

10 Անդ, էջ 49, նաև 85, 247 էջեր։

11 Անդ, էջ 43։

12 Ն. Շիրազ, Հայոց դանթեսականը, էջ 122։

13 Անդ, էջ 16, նաև 326։

14 Անդ, էջ 221։

գրական բազմադարյան դպրոց անցան, կենդանի մնացին, բազմիմաստացան իրենց կիրառության երկար ճանապարհին»¹⁵, - գրում է Վ. Առաքելյանը աստվածաշնչական ծագում ունեցող բառերի մասին: Դիտարկելով Նովհաննես Շիրազի «Նայոց դանթեականի» կրոնական նորաբանությունները, համոզվում ենք, որ Աստվածաշունչ մատյանը, որպես լեզվի հարստացման միջոց, այսօր նույնպես արդիական է:

Նովհ. Շիրազի՝ կրոնական իմաստասրային հիմք ունեցող հեղինակային նորաբանություններում հանդիպում ենք *աբելվել* «Աբելի նման զոհվել» եւ *կայենվել* «եղբոր կողմից սպանվել» նորակազմ բայերին (*Երբ ջնջեց իմ հայ աբելված ազգին կայենված մի նեռ...*)¹⁶: Ի դեպ, *կայենվել* բայի հարակապար դերբայի *կայենված* բայաձեւը հանդիպում է մի քանի անգամ: Ինչպես տեսնում ենք, Աբելի եւ Կայենի մասին հինկտակարանյան ամենանողկալի արարքի՝ եղբայրասպանության պատմությունը, հիմք է հանդիսացել բանաստեղծի համար նոր բառեր կերտելու եւ դրանցով հնարավորինս ճիշտ արտահայտելու 1915 թ. սպանդի անմարդկային բնույթը: Վայրագությունը բնորոշվում է *կայենված* մակդիրով, իսկ վայրագության զոհը *աբելվում* է: Ինչպես նկատելի է, նորաբանությունները թեեւ իմաստով կրավորական սեռի են եւ կրավորականություն են արտահայտում, սակայն ներգործական սեռի ձեւերը խորթ են, կարելի է ասել վերականգնելի չեն եւ ներգործականության իմաստ չեն արտահայտում:

Ընդհանուր բառաշարքում բավականին մեծ թիվ են կազմում քրիստոնեություն նշող իմաստասրային հիմք ունեցող նորակերպ բառերը: Ըստ սերող հիմքերի իմաստասրային առանձնահատկության՝ նշված ենթաբաժնի կրոնական բառապաշարի մաս կազմող նորաբանություններն իրենց հերթին կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ 1) *աստված* բաղադրիչով կազմված բառեր եւ 2) քրիստոնեության խորհրդանշանին, երկրպագությանը եւ պաշտամունքին վերաբերող, ծիսական-անվանողական հասկացություններ նշող հիմքերից կերտված նորաբանություններ:

1) *Աստված* բառի մասին «Քրիստոնյա Նայաստան» հանրագիտարանում կարդում ենք. «Սուրբ եւ բարձրագույն անուն՝ տրված երեւելի եւ աներեւոյթ աշխարհների ու արարածների հավիտենական Արարչին»¹⁷: Լեզվաբան Վ. Նամբարձումյանը *Աստված* բառի ստուգաբանությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ գրում է. «Նայերեն **տու* ձեւից առաջացած (կամ նրա հիման վրա բաղադրված) **տուս* (իբրեւ դիցաբանական անվանում **Աստուս*) ձեւը ամենայն հավանականությամբ պիտի եղած լինի հայոց բնիկ՝ հնդեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի («լուսի», հեղազայում՝ «աստծու») անվանումը՝ «(արեւային՝ ցերեկվա) լույս», «լուսի աղբյուր (օջախ)» եւ «լույս տվող՝ լուսարու» նախագրաբարյան (հնագույն կամ վաղնջական) իմաստների նշանակումով»¹⁸:

Է. Աթայանի փիլիսոփայական համակարգում *Աստված* եւ *Խիղճ* հասկացությունները, որոնք բնորոշվում են որպես ազատության խորհրդանիշ, նույնացված են. ըստ նրա՝ «աստվածային Բանը կամ նույնն է Խիղճը»: «Երկրի վրա Աստծո մարմնավորումը այդ ըմբռնման կենդանի խորհրդանիշն է», - գրում է Էդ. Աթայանը¹⁹:

15 Վ. Դ. Առաքելյան, Շինգերոդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն եւ ոճը, Երևան, 1984, էջ 19:

16 Ն. Շիրազ, Նայոց դանթեականը, Երևան, 1991թ. էջ 122:

17 Տե՛ս «Քրիստոնյա Նայաստան», էջ 89:

18 Տե՛ս Վ. Նամբարձումյան, Նայերեն Աստված բառի ծագումն ու փիլաբանությունը, Երևան, 2002, էջ 32:

19 Է. Աթայան, Նոգի եւ ազատություն, Երևան, 2006, էջ 137:

Այս բաղադրիչով կազմված բառերը քանակապես գերազանցում են մյուս կազմություններին: Ըստ կազմության՝ դրանք հիմնականում հոդակապավոր բարդություններ են՝ բացառյալ *աստվածաբար* (աստված+արար), *աստվածակնյա* (աստված+ակն+յա) եւ *աստվածավանդ* (աստված+ավանդ) բառերը, որոնց երկրորդ բաղադրիչները կրոնական բառապաշարի ոլորտից դուրս են եւ պարկանում են բառապաշարի համագործածական շերտին: Քննության ենթակա բառերից են՝ *աստվածագոհ* (աստված+ա+գոհ), *աստվածաարքա* (աստված+ա+արքա), *աստվածախոռով* (աստված+ա+խոռով), *աստվածալեռ* (աստված+ա+լեռ), *աստվածամարմին* (աստված+ա+մարմին), *աստվածապեղ* (աստված+ա+պեղ), *աստվածականչ* (աստված+ա+կանչ): Անդրադառնալով նշված բարդությունների արտահայտած բառիմասքներին՝ պետք է ասել, որ *աստված* բաղադրիչը սասքականություն է հաղորդում ընդհանուր բառիմասքներին՝ երբեմն խորացնելով աստվածային ուժի, զորեղության, բարձրության իմասքներ եւս: Մեր բառացանկում *Աստված* բառով հարկանշվողներից առանձնանում է *աստվածականթեղ* (աստված+ա+կանթեղ) նորակերպությունը, որի *կանթեղ* բաղադրիչը սովորական իմասքից անցում է կապարել եւ ձեռք բերել միայն կրոնական իմասք: Այն կարելի է դասել աստվածապաշարության առարկաների շարքին: Ինչպես գիտենք, նորկրակարանյան «Տասը կույսերի առակում» կույսերից յուրաքանչյուրն ուներ իր կանթեղը, որի ձեռքը Քրիստոսի հավաքքի լույսն էր խորհրդանշում (տե՛ս Մարթեոս, 25.1-13):

Սուրբ Երրորդության *Աստված* կողմից բացի, հանդիպում են նաեւ Աստվածորդու *Տիսու* անունով կերտված նորաբանություններ: «Նազար յոթ հարյուր տարի առաջ Քրիստոսի հավաքն ընդունած մեր ժողովուրդն Աստվածորդու անունով կերտել է ութ տասնյակից ավելի բառեր», - նկատում է Դ. Գյուրջինյանը: Նա այնուհետեւ հավելում է, որ «*Տիսու*-ը եւ *Քրիստոս*-ը թեւ ծագել են տարբեր լեզուներից եւ ստուգաբանական տարբեր իմասքներ են արտահայտում, սակայն հանդես են գալիս իբրեւ հոմանիշներ, քանի որ Աստվածորդու զույգ անուններն են»²⁰: Շիրազը նախընտրում է *Տիսու* հոմանիշով բառերը, օրինակ՝ *անհիսու*, *հիսուսամահ*, *հիսուսահեղ*, *հիսուսագեն*, *հիսուսադրուժ*, *հիսուսահառաչ*, *հիսուսվել*՝ «*Տիսու*սի նման խաչվել»: Ինչպես նկատելի է, նշվածներից հինգը՝ *հիսուսամահ* (հիսուս+ա+մահ), *հիսուսահեղ* (հիսուս+ա+հեղ), *հիսուսագեն* (հիսուս+ա+գեն), *հիսուսադրուժ* (հիսուս+ա+դրուժ), *հիսուսահառաչ* (հիսուս+ա+հառաչ) հոդակապավոր բարդ բառեր են, մեկը *ան*- ժխտական նախածանցով ածական է՝ *անհիսու* (ան+հիսուս), իսկ մեկը՝ կրավորական սեռի բայ (հիսուս+վ+ել), որի դեպքում նույնպես ներգործական սեռի ձեռք վերականգնելի չէ: Ինչպես գիտենք բայի մասին ուսմունքից, սովորաբար ներգործականից *վ* ածանցի միջոցով կազմում ենք կրավորական ձեւեր, սակայն Շիրազի լեզվամրաժողության պարագայում առկա է նախապես կրավորականի կազմություն, որում ելակերպինը ներգործական սեռի բայաձեւը չէ:

Նշված բառերի իմաստային հիմքը *Տիսու* Քրիստոսի սիրո վարդապետությունն է, նրա ինքնագոհությունը եւ չարչարանքների ահագնությունը, որը դարձյալ սերտորեն առնչվում է հայ ժողովրդի կրած տառապանքների նկարագրության հետ: Ակնհայտ է, որ հեղինակի լեզվամրաժողությամբ զուգահեռներ են տարված *Տիսու* մարդասեր խաչյալի եւ հայ ժողովուրդ կենսասեր տառապյալի միջեւ:

20 Դ. Ս. Գյուրջինյան, Կրոնական-լեզվական միավորների բնություն, Ս. Էջմիածին, 2002, էջ 23, 29:

բ) *Քրիստոնեության խորհրդանշանին, երկրպագությանն ու պաշտամունքին վերաբերող, ծիսական-անվանողական հասկացություններ նշող հիմքերից կերպոված նորաբանություններ*: Կրոնական ոլորտի բառաշերտի բառակերպության համար հիմք են ծառայել նաեւ եկեղեցու ծիսական արարողության հետ կապվող մի շարք սրբազան անոթներ, սպասք եւ պաշտամունքային նյութեր: Այս շարքում առանձնանում է քրիստոնեության խորհրդանշանը, պաշտամունքի եւ երկրպագության առարկան՝ *խաչը*: Սուրբ խաչի մասին կարդում ենք. «Քրիստոնեության խորհրդանշան, պաշտամունքի եւ երկրպագության առարկա: Նին աշխարհում, հարկապես Նոմեական կայսրության ժամանակաշրջանում, խաչը անարգ մահվան, անեծքի, նախապիճի եւ չարչարանքի գործիք էր»²¹: Քանի որ խաչը համարվում է Քրիստոսի փնօրինական սիրանքի փառապսակը, «քրիստոնեից լոյսը», «կուրաց առաջնորդը», «մոլորելոց դարձուցիչը», «մանկանց դաստիարակը», «նաւավարաց նաւապետը», «եկեղեցւոյ հիմնը»²², ուստի Նովհաննես Շիրազն իր նորակազմություններում միավորել է այդ բոլոր իմաստները՝ բառաբարդություններին հավելելով հեղինակային նրբիմաստներ: Կրոնական այդ եզրով կերպոված նորակազմություններից են *խաչանւրատ*՝ «խաչաշար վայր, այսինքն՝ չարչարանաց վայր», *խաչահույս*՝ «խաչին ապավինող», *հիսուսախաչ*՝ «Նիսուսի նման խաչված», *թիսխաչ*՝ «խաչը որպես թիակ փանող, իր փառապանքը քաշող» բառերը:

Շիրազի կրոնական նորակերպումներում հանդիպում է մի բանի բառ՝ կազմված *բուրվառ* բաղադրիչով: Բուրվառը ծիսական-արարողական անոթ է, որի գմբեթաձեւ, խաչագլուխ կափարիչը ծառայում է որպես խնկանոց: Այն օգտագործվում է սուրբ պապարագի եւ ծիսակապարությունների ժամանակ՝ խնկարկելու եւ բույր սփռելու համար: Ըստ Նովհան Մայրավանեցու՝ այն Աստվածածնի խորհրդանիշն է: Ինչպես Աստվածածինն է լի Սուրբ Նոգով եւ Բարձրյալի գործությամբ, այնպես էլ բուրվառը լի է սրբության բույով:

Ըստ Նայկազյան բառարանի՝ «բուրվառը» հունարեն բառ է եւ բառացի նշանակում է «կրակարան, վառարան»: Նր. Աճառյանը «Արմավական բառարանում» այլ դիտարկումներ է ներկայացնում՝ «բուրվառ» ձեւաիմաստային միավորի բաղադրիչ համարելով «բոյր» իրանյան բառը: «Բոյր» փոխառությունը հին մարենագրությամբ ավանդված չէ եւ գործածական է միայն նոր գրականում: Մեյեն հակված է «բուրվառ» կազմությունը ժողովրդական սրուգաբանությամբ բացատրելուն: «Բոյր» բաղադրիչը կապում են նաեւ օսերեն «խունկ» բառի հետ: Տարբեր լեզուներում այս բաղադրիչը փառքեր իմաստներ է արտահայտում՝ «արթուն», «սթափ», «աշխույժ», «դիպել», «հսկել», «մաքուցել» եւ այլն:

Շիրազն իր սրեղծագործության մեջ խորացրել է *բուրվառի* վերը նշված հարկանիշները եւ կերպել *անբուրվառ* (ան+բուրվառ) նախածանցավոր եւ *հազարաբուրվառ* (հազար+ա+բուրվառ) բարդ բառերը (... *Կարդում զոհերի հոգեհանգիստը՝ անխունկ, անբուրվառ... եւ ...Խունկ են աղերսում հոգեհանգստի հազարաբուրվառ...*)²³: Նայ ժողովրդի ազգային փառապանքը նկարագրելիս հեղինակի խաչանրատները «անբուրվառ» են, երբեմն էլ՝ «հազարաբուրվառ»:

21 Տե՛ս «Քրիստոնյա Նայասարան», էջ 422:

22 Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729:

23 Ն. Շիրազ, Նայոց դանթականը, էջեր 213 եւ 53:

Ածանցավոր բառերի մեջ առանձնանում են նախաձանցավորները, որոնք հիմնականում կազմված են *ան-* ժխտական ածանցով: Օրինակ՝ «Ու գնում էինք աշխարհանըզովք խղճի մոունչով Իմ յոթը միլիոն հայերին խժոռո եղեռնի միջով, Կարդում զոհերի հոգեհանգիստը՝ *անխունկ, անքուրվառ, անկնդրուկ*, անխոս, բայց լռությամբ էլ վրիժաբարբառ» (էջ 213):

Նոգետոր ոլորտի նորաբանությունների շարքում հանդիպում է նաեւ սուրբ հաղորդության նյութ նշող *մաս* բառից կազմված *ազգամասունք* (ազգ+ա+մաս+ունք) բաղադրությունը:

Ընդհանրական եկեղեցու, ինչպես եւ Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից սուրբ համարվող հացը կամ մասը Քրիստոսի մարմնի խորհրդանշանն է: Ազաթանգեղոսն այն կոչում է «եկեղեցու օրինյալ հաց», որը սուրբ պապարագի խորհրդակապարության փոխակերպվում է Նիսուս Քրիստոսի մարմնի:

Սուրբ նկանակը եւ դրա փարապետակները գրական հայերենում ունեն փարբեր բառանվանումներ՝ *նշխար, մաս, սուրբ հաղորդության հաց, քաղարջ, բոկեղ* եւ այլն:

Նունարեն *antidoron* (*anti-* հակա, փոխարեն, *doron* - նվեր, պարգև) նշանակում է նվերի փոխարեն, այսինքն՝ սուրբ հաղորդության նշխարի փոխարեն: Սուրբ սեղանի վրա բարձրաստիճան հոգեւորականի կողմից օրհնված նշխարի փշուրները կոչվում են *մաս*: Ովքեր սուրբ պապարագին չեն հաղորդվում, սուրբ սեղանից անմասն չմնալու համար հաղորդության փոխարեն *մաս* են ստանում:

Ինչպես փեսնում ենք, Շիրազը հայ ժողովրդի ափնիները կոչում է *ազգամասունք*, այսինքն՝ եղեռնապորժ հայության այն բեկորները, որոնից ապագայում հայություն պիտի կերպվեր, ու հայ ժողովուրդը պիտի վերակենդանանար: Ինչպես քրիստոնեական եկեղեցում մասը կամ հաղորդության սուրբ հացը Քրիստոսի մարմինն է խորհրդանշում, այնպես էլ հայ ժողովրդի մասնիկները հարություն առնող ամբողջական հայությունն են մարնանշում:

Քրիստոնեական եկեղեցում օծման համար կիրառվող սրբազան հոփավետ յուղի *մյուռոն* անվանման միջոցով Շիրազը կազմել է *մյուռոնաթաս* (մյուռոն+ա+թաս) հոդակապավոր բարդությունը: Զանազան անուշահոտ ծուխ արձակող նյութերի՝ կնդրուկի, հավի եւ այլնի ընդհանուր անունը նշող *խունկ* բառով են կազմված *անխունկ* (ան+խունկ) ածանցավոր եւ *խնկախոս* (խունկ+ա+խոս) բարդ հոդակապավոր բառերը: *Անկնդրուկ* (ան+կնդրուկ) նորաբանության մեջ *խունկ* բառի փոխարեն գործածվել է նրա բաղադրիչներից մեկը նշող *կնդրուկ* ձեւափմաստային միավորը:

գ) *Այլադավանություն նշող իմաստային հիմքով կազմված բառեր*: Շիրազի կրոնական նորաբանություններում հանդիպում են նաեւ բառեր, որոնց սերող հիմքը այլ դավանանք նշող բառ է: Այդպես *Մահմեդ, իսլամ, ալլահ* բառերից են կերպվել *մահմեդվել, իսլամասյուն, ալլահաթրքիջ* բառերը: Ինչպես փեսնում ենք, *մահմեդվել*՝ «մահմեդական դառնալ՝ հավաքքը կորցնել» կամ «մահմեդականին հափուկ մոլեռանդ դաժանությամբ փոզորվել» կրավորակերպ չեզոք սեռի բայի համար հիմք է ծառայել մահմեդական կրոնի առաջնորդ մարգարեի՝ Մուհամեդի անունը:

Իսլամասյուն (իսլամ+ա+սյուն) գոյականի համար սերող հիմք է ծառայել ընդհանրապես մահմեդական կրոն նշող *իսլամ* հոմանիշը (Չորս նիզակաձեւ *իսլամասյուններ*՝

Պաշարել էին վանքը զույգ ազգի)²⁴:

Ալլահաքրքիջ (ալլահ+ա+քրքիջ) բարդ բառի *ալլահ*՝ «մահմեդականների աստված» բաղադրիչով հեղինակն արտահայտել է եղեռնի սոսկալի եւ հակամարդկային էությունը, նաեւ թշնամու քմարդի վարքը, խղճի զգացումից զուրկ լինելը:

Խորիմասար է նաեւ *անեծքաձայն* (անեծ+ք+ա+ձայն) նորաբանությունը, որը բնագրային հասկացումն հանդես է գալիս որպես *աստվածականչի* հարկացուցչի հարկացյալ (Ծերունիների *անեծքաձայներն* աստվածականչի, Որ նման էին մերթ լացող մանկանց, մերթ մարդագոչի)²⁵:

Այսպիսով, Հովհ. Շիրազն իր «Հայոց դանթեականը» պոեմում, հայերենի ներլեզվական հնարավորությունները կիրարկելով, սպեղծում է նաեւ կրոնական հավաքալիքներ նշող իմաստային հիմք ունեցող բազմաթիվ նորակերպ բառեր, որոնք հարստացնում են ժամանակակից գրական արեւելահայերենի բառապաշարը, նպաստում նրա զարգացմանն ու կարարելագործմանը: Բառապաշարի հարստացման ներքին այդ ճանապարհը միշտ բանուկ են պահում հայ գեղարվեստական գրականության երեսելիները, որպիսին էր նաեւ փաղանդաշար բառակերպ Հովհաննես Շիրազը:

24 Ն. Շիրազ, Հայոց դանթեականը, էջ 59:

25 Ն. Շիրազ, Հայոց դանթեականը, էջ 292: